

Ռ. Ս. Աբրահամյան

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ

Հայ-հնդկական հարաբերությունները և կապերը, ինչպես ցույց են տալիս պատմական սկզբնաղբյուրները, ունեն բազմաթիվ դարերի հարուստ պատմություն: Հնագույն տեղեկությունը այդ կապերի մասին գալիս է մ. թ. ա 5-րդ դարից և անընդմեջ շարունակվում մինչև մեր օրերը: Հայ հնդկական բարեկամական այդ կապերն իրենց արտացոլումն են գտել ինչպես օտար, այնպես էլ հայկական սկզբնաղբյուրներում: Հայկական սկզբնաղբյուրներում Հնդկաստանի վերաբերյալ աշխարհագրական տեղեկությունների վրա է, որ ուզում ենք կանգ առնել մեր ներկա համառոտ հաղորդման մեջ:

Առաջին հեղինակը հայ մատենագրության մեջ, որը խոսել է Հնդկաստանի աշխարհագրության մասին, դա 7-րդ դարի հայ ականավոր գիտնական Անանիա Շիրակացին է: Նա իր հայտնի «Աշխարհացույցում» Հնդկաստանին նվիրել է առաջնակարգ տեղերից մեկը:

Ըստ Ա. Շիրակացու նկարագրության, Հնդկաստանը սահմանակից է Պարսկաստանին և Չինաստանին: Գանգես գետով նա բաժանվում է Արևելյան և Արևմտյան մասերի, որոնք կոչվում են Արևմտյան Հնդկաստան և Արևելյան Հնդկաստան: Ըստ Շիրակացու Հնդկաստանի արևմուտքում ապրում են հիսուն ութ, իսկ արևելյան մասում յոթանասուն երկու ժողովուրդներ: Նա համառոտ խոսում է նաև Հնդկաստանի մյուս մասերի մասին:

Շիրակացին այնուհետև նկարագրում է Հնդկաստանի էկզոտիկան, նյութ հարուստ բնությունն ու կենդանական աշխարհը: «Լինի ի Հնդիկս երէ յամոյրանման, սրեղջիր որը սպանանէ զառիւծ, և հրեշ երէ, և այլ գազան նման զառիւծոյ, բայց կնճիթն սուր և երկար և ընծուղտը և կորեանք, և պապակայք և արաղաղ փետրամորուսք և փիղք, և վագերք, և վիշապք, մեծ մրջյունք և մկունք լիշմշկոյ, և կոկորդիլ գազան, և միհղջիր որ է մեծ գազան, և ի վերայ ողինն ճագք, և զփիղ, որ լեզուան սպանանէ և պասկաճ հաւ, և մուշկ երէ և ել եզջիրաւոր»¹:

Շիրակացին իր «Աշխարհացույցում» առանձնապես նշում է Հնդկաստանի մեծ հարստությունը և թվարկում այն ապրանքները, որոնք կարելի է գնել այնտեղ. «Լինի անդ ոսկի, և արծաթ, և պղինձ, և անագ, և մարգարիտ, և ական ամենագոհար: Լինի պղպեղ, լինի և սնդու եղ և ամենայն բովոճայք, հալուե, փաղանգամուշկ, քափուր, ճանդան նայիրոակ, հերիբոակ, գողիբոակ, կասիմոն, դովադակ, շահաւ-արմատ դարիշակ և բազում զեղ բժշկական»²: Հնդկաստանին նվիրած լատին վերջում Շիրակացին թվարկում է Հնդկաստանից գտնվող գոհարների տեսակները և նրանց արժեքը:

¹ Պրոֆ.-դր. Ա. Գ. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրություններ, Երևան, 1944, էջ 353:

² Նույն տեղում:

Հայ աշխարհագրի Հնդկաստանի մասին հաղորդած տեղեկությունները արժեքավոր են, ոչ միայն հայ-հնդկական հարաբերությունների պատմության համար, այլև պատկերացնելու տնտեսական այն խոշոր դերը և համարումը, որ ունեցել է Հնդկաստանը հնագույն դարերում ամբողջ Արևելքում՝ րնդհանրապես:

Հնդկաստանի աշխարհագրությանը հետագու դարերում անդրադարձել են նաև մյուս հայ պատմագիրները և աշխարհագետները: Դրանցից արժեքավոր է հատկապես անանուն հայ հեղինակի «Անուն քաղաքաց հնդկաց և պարսից» վերնագիրը կրող աշխարհագրական բովանդակությամբ հետաքրքիր տեքստը: Այս տեքստը պահվում է ՀՍՍՌ Երևանի Պետական Մատենադարանի յոթ զանազան ձեռագրերում: Աշխարհագրական այս տեքստում եղած մի փոքր ակնարկից հնարավոր է դառնում մոտավոր ճշտությամբ որոշելու տեքստը գրելու ժամանակը՝ 1006—1010 թթ.: Այս մասին մանրամասը տես մեր հոդվածը³:

Ուշագրության արժանի է, որ «Անուն քաղաքաց հնդկաց և պարսից»-ի տեքստը բոլոր յոթ ղեպքերում էլ տեղավորված է աշխարհագրական ժողովածուներում: Տվյալ տեքստը պարունակող համարյա բոլոր ժողովածուներում նրանից առաջ յնդօրինակված է Շիրակացու աշխարհացույցը: Այն կազմող հեղինակները ըստ երևույթին նպատակ են ունեցել կազմելու աշխարհագրական նյութերի ժողովածու, ուղեցույց՝ Հնդկաստան և նրա հարևան երկրները գնացող հայերի համար: Ինչպես ցույց են տալիս պատմական սկզբնաղբյուրներում պահված փաստերը, հիշյալ ժամանակներում Հայաստանը տնտեսական և կուլտուրական փոխհարաբերությունների մեջ էր Հնդկաստանի և նրա հարևան երկրների հետ:

Աշխարհագրական ուղեցույցի այս տեքստի հեղինակը, ինչպես երևում է տեքստից, Հնդկաստանի հետ քաջածանոթ անձնավորություն է հանդիսացել: Նա իր նկարագրությունը սկսել է Հնդկաստանի հյուսիսից՝ Պանիան, Պուրշաուր, Լահոու, Կաշմիր, Պանկուր, Նահրուալա քաղաքներից և վերջացրել Հնդկաստանի հարավային կետի Ոսկե գետին կոչվող հովտի և Ցեյլոն կղզու նկարագրությամբ: Անանուն աշխարհագիրը նկարագրել է նաև այդ քաղաքները տանող ուղիները, տվել նրանց հեռավորությունը իրարից, քաղաքների վարչական որ լաժանման մեջ գտնվելը, այդ քաղաքների գործածական լեզուն և այլն: Տեղ-տեղ հեղինակը տվել է նաև հնդիկների կենցաղային սովորությունների համառոտ նկարագրությունները: Համեմատաբար ընդարձակ է խոսված ժամանակի տնտեսական կյանքի մասին:

Ցեյլոն կղզուց բացի, համառոտ խոսվում է նաև մի քանի ուրիշ կղզիների մասին: Հետաքրքիր տեղեկություններ կան այս փոքր տեքստում հատկապես Հնդկաստանից արտահանվող ապրանքների մասին: Ընդհանուր առմամբ հեղինակը խոսում է 11-րդ դարի վերջերի և 12-րդ դարի սկզբների հնդկական մոտ քառասուն քաղաքների, քաղաքատիպ վայրերի և կղզիների մասին: Ահա դրանցից մի քանիսը. Ղազնա, Քարուլ, Քաշմիր, Նահրուալա, Մուլթան, Սելյով, Սոմնախտ, Պուրշ, Մլեպար, Տարավի, Պանկուր, Փոնավի, Նախեպտին, Շահպատին և ուրիշներ: Կղզիներից հիշված են՝ Լամրին, Ցեյլոնը, Փանջուր:

³ ՀՍՍՌ Երևանի Պետ. Մատենադարան, ձեռ. № № 1898, 1770, 7993, 1864, 3681, 5950, 3671:

⁴ «Բանբեր Մատենադարանի», № 4, 1958:

Բամբրի, Կրուտ, Սահավի և ուրիշները Հնդկաստանի աշխարհագրական հին քարտեզների ուսումնասիրության վրա հնարավոր եղավ պարզել այս տեքստում հիշված աշխարհագրական վայրերի մեծ մասի տեղերը:

12-րդ դարի հայտնի պատմիչ Հեթումը իր աշխատության 6-րդ գլուխը ամբողջությամբ նվերել է Հնդկաստանի աշխարհագրությանը: Այսպես, Հրնդկաստանի տեղագրության մասին Հեթումը հետևյալն է գրում. «Հնդկական թագավորությունը երկայնաձիղ տարածվում է օվկիանոսի մեջ. նրա ափերը ողողած է Հնդկական ծովը: Նա հյուսիսից սահմանակից է Պարսկաստանին՝ Պալարիամ նահանգով: Հնդկաստանի հյուսիսում գտնվում է բազմաթիվ սուզուններով լիժր անապատը... Հնդկաստանի հարավը ամբողջությամբ շրջապատված է օվկիանոսի ջրերով... այնտեղ ապրում են բազմաթիվ բնակիչներ»⁵: Այնուհետև Հեթումը համառոտ նկարագրում է հնդիկներին, տալիս նրանց ազգային սովորությունները: Նա նկարագրում է նաև Յեյլոն կղզին: Յեյլոնի և նրա շրջակա կղզիների մասին խոսելիս նա գրում է. «...անդ գտանին ակունք պատուականք՝ մարգարիտ և ոսկի և բազում տեսակ ղեղորէից, զոր բազում անգամ առեալ լերեն մարդիկ այսր աշխարհ»⁶ (այսինքն՝ Կիլիկյան Հայաստան—Ռ. Ա.):

Ինչպես հայտնի է, մինչև Մարկո Պոլոն Հնդկաստանի ծովային ճանապարհը հայտնի չէր և Հնդկաստան էին գնում միայն ցամաքային ճանապարհներով: Խոսելով Հնդկաստան տանող ուղու մասին, Հեթումը նկարագրում է դրանցից մեկը: Նա գրում է. քանի որ Հնդկաստանը շրջապատված է օվկիանոսի ջրերով, ուստի դժվար է մտնել Հնդկաստան: Այնտեղ կարելի է գնալ միայն մի ճանապարհով՝ Պարսկաստանի վրայով: «Հնդկաստան գնացողները,—գրում է Հեթումը,—նախ գնում են Հերմս քաղաքը, ապա անցնում ծովածոցով Քամպար նավահանգիստը և այնտեղից իջնում Հնդկաստան:

Հայտնի է, որ Հեթումը Հնդկաստանում չի եղել: Մնում է ենթադրել, որ նա օգտվել է իր հարուստ գրադարանի հայերեն ձեռագիր որևէ աշխարհացույցից, կամ Հնդկաստան այցելած կիլիկեցի հայերի հաղորդած տեղեկություններից:

Հնդկաստանի աշխարհագրությանը բավականին ընդարձակ տեղ է տրված Մատենադարանի № 5026 ձեռագրում, որ հիմնականում աշխարհագրական նյութերի ժողովածու է: Աշխարհագրական այս տեքստում հեղինակը Հնդկաստանը համարում է Ասիայի «ամենից մեծ բաժիններից մեկը»: Նա բավականին մանրամասնությամբ և ճշտորեն է նկարագրում Հնդկաստանի աշխարհագրական դիրքը, նրա սահմանները, ափերը ողողող ջրերը, ապա անցնում նրա բնության, կլիմայի և կենդանական աշխարհի նկարագրությանը: Ահա այդ նկարագրությունից մի հատված. «և այս երկրին (Հնդկաստանին—Ռ. Ա.) կայ մեծամեծ գետեր, որ է Կենճեսն (Գանգեսը—Ռ. Ա.) Հինտոսը, Հիբանին, բայց մեծը Կենճեսն է և երկիրն է յոյժ գեղեցիկ և պտղաբեր, օդն քաղցր և առողջարար, զեփիուս հողմը շրջի անդադար և տարին երկու անգամ վերացուցանեն զկալ ցորենոյն, զի տարին երկու անգամ ամառ լինի»:

Ըստ այս աշխարհագրական տեքստի նկարագրության, հատկապես հարուստ է Հնդկաստանի հարավային մասը, որտեղ բնությունը տալիս է «նար-

⁵ Հեթում պատմիչ, Վենետիկ, 1842, էջ 10—12.

⁶ Նույն տեղում:

գոս, կինամոն, զտաբտեղ, զկալամալն և զայլ պահարներս (համեմունքներ— Ռ. Ա.): Հնդկաստանի բնությունը նկարագրելիս, հիշում է. «Անթիւ սիրամարգթ. թաուղ զուշին, ազգ մի կենդանիք կան փղան, որ կոչին մօնօզրիստի» (արնդ-կղջուր—Ռ. Ա.) և այլն:

Հեղինակը շի մոռանում տալ նաև հնդիկների մարդաբանական կառուցվածքի նկարագրերը: Բերում է նրանց մասին Հնդկաստանից դուրս տարածված զանազան առասպելները, ապա դտնում, որ «յոյժ տարակոյս բանք են այս»:⁷ Հնդիկների մասին իր լսած և կարդացած առասպելները հերքելուց հետո հեղինակը բերում է այն տեղեկությունները «զորն որ տեսել ևմք, զորն որ լսել ևմք»:

Հնդկաց երկրի գավառները զրում է նա, բոլորից շեն են ու գեղեցիկ. որոնք կոչվում են փայադին. նրանց տիրում է մի թագավոր, որը հարկատու է թաթարներին... Հնդկաստանն ունի բազմաթիվ բարգավաճ գյուղեր և քաղաքներ... Հնդիկները խիստ իմաստուն են, խելոք և առատամիտ, գիտակ են ամեն տեսակ արհեստի և գիտություն... Ամբողջ Արևելքում նրանց նման ճարտար և հասկացող ազգ չկա...

Խոսելով հնդիկների կրոնական հավատալիքների մասին, հեղինակը հայտնում է, որ նրանք «զոմանք պաշտեն զարեգակն, ոմանք զլուսին և զաստեղս և այլ ազգի կուռս՝ եղան, ձիս...»:

Հնդկաստանի նկարագրությունից հետո տեքստի հեղինակը անցել է «Ր Հնդկաց տան հարավային կողմանց» կղզիների նկարագրությանը, որոնք հեղինակի վկայությամբ հայտնաբերել են հուանդադի նավաստիները: Շեշտված կերպով է խոսում ինչպես կղզիների, այնպես էլ Հնդկաստանի տնտեսական կյանքի և այնտեղից արտահանվող բազմատեսակ թանկագին քարերի և համեունքսերի տեսակների մասին:

Դժբախտաբար հնարավոր չեղավ պարզել, ինչպես այս տեքստի, այնպես էլ ողջ աշխարհացուցի հեղինակի հարցը: Սնում է ենթադրել միայն, որ Լեվ հեղինակը հայ է, ապա նա մեծապես օգտվել է օտար և հայ աղբյուրներից և ապա կազմել իր այս հետաքրքիր աշխարհացուցը: Նման կերպով նա նկարագրել է աշխարհի մի քանի ուրիշ երկրները: Նրա արժեքը շի ընկնի, Լեվ նույնիսկ հետագայում կողմնակի փաստերը ապացուցեն, որ նա միջին դարերում թարգմանվել է օտար «Աշխարհացուցից», քանի որ հենց այդ փաստը ինքնատիսթյան դարձյալ ցույց կտա և կրկին անգամ կապացուցի այն մեծ հետաքրքրությունը, որ ցուցաբերել են հայերը Հնդկաստանի նկատմամբ միջին դարերում:

Համանման մի տեքստ Հնդկաստանի աշխարհագրության մասին պահպանվում է ՀՍՍՌ Պետական Մատենադարանի № 1787 ձեռագրում, որը նույնպես աշխարհագրական նյութերի ժողովածու է: Հետաքրքիր է, որ այս աշխարհացուցում Հայաստանի և Հնդկաստանի աշխարհագրություններին նվիրված մասերը զրված են կողք-կողքի:

Մատենադարանի 1770 ձեռագրում համառոտ, բայց հետաքրքիր տեղեկություններ են պահվել Հնդկաստանի և Չինուփաթան (հետագայում Մադրաս

⁷ Փորրիկ այս ակնարկից կարելի է ենթադրել, որ աշխարհագրական այս տեքստը պետք է որ զրված լինի Աբսպարի գահակալությունից առաջ: Հնդկաստանը XVI դարում այլևս հարկատու չէր թաթարներին, շնայած նրա գահին նստած էր թաթար մեծ բռնակալի թոռ Աբսպար շահը:

քաղաքի) մասին: Այս համառոտ տեքստի հեղինակը Շիրակացու օրինակով Հնդկաստանը՝ Գանգեսով բաժանում է երկու մասի, տալիս նրա համառոտ նկարագրությունը:

Եման համառոտ մի նկարագրություն պահվել է նաև Մատենադարանի № 9100 ձեռագրում:

Մի այլ համառոտ տեղեկություն Հնդկաստանի հարավի մասին պահպանվել է նույն Մատենադարանի № 9071 ձեռագրում:

Հնդկաստանի համառոտ աշխարհագրությունը պահվել է նաև Մատենադարանի № 1721 ձեռագրում:

Մատենադարանում պահվող աշխարհագրական և պատմական տեղանունների ձեռագիր մի հանրագիտարանում (ձեռ. № 6823) կարելի է հանդիպել հնդկական մի շարք տեղանունների և նրանց բացատրություններ:

Վերջերս մեզ հաջողվեց հայտնաբերել Խովմաս Խոջամալյանի «Պատմություն Հնդկաց» աշխատության առաջին հատորի մանրամասը նկարագրությունը Պարզվեց, որ Խոջամալյանը հիմք ունենալով իր անձնական գրառումները և ուսումնասիրությունները Հնդկաստանում, ընդարձակ տեղ է հատկացրել Հնդկաստանի աշխարհագրությանը: Հայկական այս աղբյուրը հետաքրքիր է հատկապես այն տեսակետից, որ այնտեղ մանրամասը խոսում է Հնդկաստանի XVII—XVIII դարերի վարչական բաժանման և 21 սուբյուկությունների (նահանգների) մասին: Աշխարհագրության մասում առանձին բաժիններ են նվիրված Հնդկաստանի կլիմայական պայմաններին, բուսական և կենդանական աշխարհին: Առանձին նկարագրության են արժանացել Հնդկաստանի խոշոր գետերը, լճերը և անտառները: Անհավանական չէ, որ Խոջամալյանը իր ուսումնասիրություններից բացի օգտված լինի հնդկական աղբյուրներից:

Աշխարհագրական-տեղագրական մեծ արժեք ունեն Հարություն Կարբեցու և Յ. Տեր-Թադևոսյանի ուղեգրությունները, առաջինը նվիրված Պարսկաստանին և Հնդկաստանին⁸, երկրորդը Մադրասից-Կալկաթա ուղու⁹ ջուն-գրիներին միջով: Ի միջի այլոց Հարություն Կարբեցու աշխատությունը միակ հայ աղբյուրն է, ուր տրված է էջմիածնից մինչև Հնդկաստանի հեռավոր Չիչրաքաղաքն ընկած ուղու նկարագրությունը:

Հնդկաստանի աշխարհագրության վերաբերյալ մի շարք ընդարձակ և հետաքրքիր ձեռագրեր են պահվում արտասահմանյան հայկական մատենադարաններում:

Ավելի ուշ շրջանում հայերը արդեն ընդարձակ ուսումնասիրություններ նվիրեցին Հնդկաստանի աշխարհագրությանը: Հ. Գուլերի և Ղ. Բնճիճյանի, բաղմամարուստ աշխարհագրության շորրորդ հատորը, որն ամբողջապես նվիրված է Հնդկաստանին և Չինաստանին, մինչև հիմա ուսումնասիրողի հիացմունքն է շարժում¹⁰: Հայ աշխարհագետները մոտ 200 էջերի վրա գիտական խիստ բարձր որակով շարադրել են Հնդկաստանի աշխարհագրությունը հաճախ այնքան մանրամասը, որ ժամանակի շատ ուսումնասիրություններ դիջում են նրան: Հետաքրքիրն այն է, որ այդ ուսումնասիրությունը գրված է

⁸ Հ. Կարբեցու «պարսկա-հնդկական ուղեգրությունը» ուսումնասիրությամբ և ծանոթագրություններով հանձնել ենք Մատենադարանի «Բանբերին», որը շուտով լույս կտեսնի:

⁹ Աշխարհագրություն շորից մասանց աշխարհի, 1802 թ. Վենետիկ:

մեծ մասամբ Վենետիկի ձեռագրատան և գրադարանի աղբյուրների հիման վրա:

Առանց չափազանցնելու կարելի է ասել, որ մեծարժեք այդ ուսումնասիրությունը Հնդկաստանի աշխարհագրությանը նվիրված ամենավազույններից մեկն է ընդհանրապես:

Հայկական աղբյուրներում Հնդկաստանի աշխարհագրության վերաբերյալ տեղեկությունները շեն սահմանափակվում մեր բերածներով: Նրանք անշուշտ շատ են և ցրված հայ բազմահարուստ շուրջ 1500 տարվա մատենագրության ծալքերում: Մեր նպատակից վեր է եղել վեր հանել նրանք և ներկայացնել գիտական աշխարհին:

Փոքրիկ այս հաղորդման նպատակն է եղել աշխարհագրության սյուտմությամբ զբաղվող մասնագետների ուշադրությունը հրավիրել հետաքրքիր այս հարցի վրա: